Հավելված
ԱրՊՀ գիտական խորհրդի
2017 թվականի փետրվարի 28-ի N6-Լ որոշման

Ուսանողի կողմից այլ դասընթացի յուրացման կարգ

I.Ընդհանուր դրույթներ

1. Ուսանողի կողմից այլ դասընթացի յուրացման կարգը (այսուհետ՝ կարգ) սահմանում է Արցախի պետական համալսարանում (այսուհետ՝ ԱրՊՀ) բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից, ցանկացած այլ դասընթաց յուրացնելու կանոններն ու ընդհանուր պայմանները:

2. Սույն կարգի իրավական հիմքերն են <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>>, <<Կրթության մասին>> ԼՂՀ օրենքները, ԱրՊՀ կանոնադրությունը:

II.Ուսանողի կողմից այլ դասընթաց յուրացնելու կարգն ու պայմանները

3. Ուսանողը իրավունք ունի, իր դիմումի համաձայն, բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից, յուրացնելու ուսումնական ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է ԱրՊՀ-ում:

4.Այլ դասընթաց յուրացնելու մասին ուսանողի դիմումն ընդունվում է յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի ուսումնական պարապմունքներին նախորդող երկու և հաջորդող մեկ շաբաթների ընթացքում:

5. Այլ դասընթացի յուրացման համար ուսանողը կցվում է տվյալ դասընթացը անցնող խմբին: Ուսանողը պարտավոր է հաճախել ուսումնական պարապմունքներին՝ պահպանելով ԱրՊՀ կանոնադրությունը և ներքին կանոնները:

6.Ուսանողի կողմից այլ դասընթացի յուրացումը իրականացվում է վճարովի հիմունքներով՝ ելնելով տվյալ դասընթացի կրեդիտների քանակից ու յուրաքանչյուր կրեդիտի արժեքից:

7. Ուսանողի՝ տվյալ դասընթացից վաստակած կրեդիտները գրանցվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում, որը արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

8. Ուսանողի՝ տվյալ դասընթացից ստացած գիտելիքների ստուգման և գնահատման գործընթացը իրականացվում է կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի՝ տվյալ դասընթացի համար սահմանված պահանջներին համապատասխան:

9. Բացառիկ դեպքերում, ռեկտորի հրամանով, կարող են սահմանվել սույն կարգի 4-րդ և 8-րդ կետերով կարգավորվող հարաբերությունների առումով այլ պայմաններ: